ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 փետրվարի 2024 թվականի N 75 - Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետով և 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 19-ի N 1863-Ա որոշման 5-րդ կետը՝

որոշում եմ.

1. Սյունիքի մարզի «Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» ՓԲԸ գույքի ցանկից առանձնացված, Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող, մարզ Սյունիք, համայնք Մեղրի, գյուղ Շվանիձոր 1-ին փողոցի թիվ 18/3 հասցեում գտնվող՝ 163.8 քառ. մետր մակերեսով ամբուլատորիայի շենքը՝ 0.0217 հեկտար սպասարկման հողամասով (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N18122023-09-0035), Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին հանձնելու նպատակով ստեղծել գույքի հանձնման հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնաժողովին՝ մեկ ամսյա ժամկետում ապահովել նախատեսված գույքի հանձնման աշխատանքների իրականացումը և ներկայացնել տեղեկատվություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

2024թ. փետրվարի 29
ք. Կապան

Digitally signed by GHUKASYAN ROBERT 3712800290

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզպետի
2024 թվականի փետրվարի 29-ի
N 75-Ա որոշման

ԿԱԶՄ

Աշարժ գույքի հանձնման հանձնաժողովի

1	Նունե Գևորգյան	Մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ (հանձնաժողովի նախագահ)
2	Մարինե Աբգարյան	Մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության գլխավոր մասնագետ
3	Արմեն Մարտիրոսյան	Մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետ
4	Միեր Աբրահամյան	«Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար
5	Կարինե Մկրտչյան	«Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» ՓԲԸ գլխավոր հաշվապահ

ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի
գլխավոր քարտուղար՝ Է.Մարտիրոսյան